

ունի: Իր այս տեսակետը հիմնավորելու համար նա մեջ է բերում մի կանոն-նամե, ուր գրված է, թե իսպենջ բառը «անհավատների լեզվով» է<sup>1</sup>:

Այստեղից էլ եզրակացվում է, որ իսպենջը հոգոգտագործման համար գանձված հարկն է: Ըստ Բարքանի, իսպենջը նույնն է, ինչ որ մուսուլման ուսյաթներին գանձված «ոեամ ի չիֆտ»ը<sup>2</sup>:

Բարքանի այս տեսակետը ճիշտ կարող է լինել, որովհետեւ էրզրումի կանոն-նամեում պարզորեն գրված է հետևյալը. «Եվ հիշյալ լիվայի (էրզրումի) անհավատները իրենց խարաջները վճարելուց հետո, ամեն մի հարկատու գլխի համար «ոեամ ի չիֆտ»ի փոխարեն 25 ալչե իսպենջ վճարեն. հնագույն օրենք է: Իսպենջը վճարելուց հետո, նրանք «ոեամ ի չիֆտ» և «ոեամ ի դոնյում» չեն տա<sup>3</sup>:

Սրա հետ մեկտեղ պետք է նշել նաև, որ «իսպենջ»-ը իրենից ներկայացնում է ոչ այլ ինչ, քան գլխահարկ, որովհետեւ նա գանձվում էր բոլոր ոչ մուսուլման հպատակներից «անկախ այն բանից, թե նա հող մշակում է, թե ոչ»<sup>4</sup>: Գյուրջիստանի ընդարձակ դաֆթարում հիշատակված հարկերի մեջ «իսպենջը» առաջին տեղն է գրավում: «Իսպենջ» հարկի չափը միշտ եղել է 25 ալչե<sup>5</sup>:

Թուրքիայում մի լրացուցիչ գլխահարկ կարելի է համարել նաև «ավարիզ», միայն այն տարբերությամբ, որ հարկը գանձվում էր ինչպես ոչ մուսուլման, այնպես էլ մուսուլման հպատակներից:

«Ավարիզ» («Avâriz») արաբերեն *أرض* բառի հոգնակի ձևն է, որը նշանակում է պատահական (հասույթներ): Այս տերմինի տակ հասկացվում էին զանազան արտակարգ դեպքերի ժամանակ (հատկապես պատերազմների) ուսյաթի կատարած տարբեր աշխատանքները: Հաճախակի, «ավարիզը» փոխարինվում էր տուգանքով: «Ավարիզ»-ը օսմանցիների մոտ մուսք է գործել իլխաններից<sup>6</sup>:

Փաստաթղթերում և աղբյուրներում «ավարիզ»-ի փոխարեն հաճախ օգտագործվում են «ավարիզ ալչեսի» («Avariz akçesi»), «ավարիզի դիվանիե» («Avâriz-i divaniye») և «պակսիմեթ ալչեսի» («paqsimet akçesi») տերմինները: Պակսիմեթ նշանակում է չորացած հաց, այսինքն դարձյալ պատերազմների ժամանակ զինվորների կարիքների համար, սվյալ դեպքում հացի համար, հավաքված գումարը:

Ըստ թուրքական աղբյուրների, սուլթան Բալազղեղ 2-րդի (1481—1512) ժամանակ Ստամբուլում և Էդիրնեում հիշրեթի 903 (1508—1509) տեղի ունեցած մեծ երկրաշարժի ու նրա պատճառած ֆլասների հետևան-

<sup>1</sup> Տե՛ս Paul Witteck, *Devshirme and shâria*, Bulletin of the school of oriental and african studies University of London, Vol. XVII, Part 2, London, 1955, p. 272.

<sup>2</sup> «Ռեամ-ի չիֆթ» («resm çift») ար. պարսկերեն — մուսուլման ուսյաթներից գանձվող հողային հարկ մի մուսուլմանից: Վերջինը իրենից ներկայացնում էր որոշ հողակրտոր, որը կարելի էր մշակել մի տարվա ընթացքում մի դույզ եղան օգնությունով: «Չիֆթ» պարսկերեն նշանակում է «գույզ»:

<sup>3</sup> Erzurum kanunu (Om. L. Barkan, s. 65).

<sup>4</sup> Տե՛ս, M. Z. Pakâln, *Osmanlı tarih deyimleri...*, cilt I, 1951, s. 88.

<sup>5</sup> Տե՛ս, Erzurum kanunu, s. 64, Gürcistan kanunu, s. 197, Çemisgazek livası kanunu s. 189, Bitlis kanunu s. 192 (Om. L. Barkan).

<sup>6</sup> Տե՛ս, Y. H. Uzunçarşılı, *Osmanlı devleti teşkilâtına medhal*, İstanbul. 1941, s. 162, 247, 261.